ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Գ. Սանոյանին
Տեղական ինքնակառավարման քաղաքականության
վարչության պետ Աշոտ Գիլոյանից

Հաշվետվություն

Ս.թ. մայիսի 28-ից հունիսի 1-ը Շվեդիայի Թագավորություն
գործուղման մասին

Ս.թ. մայիսի 28-ից հունիսի 1-ը «Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացմանն ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» խորագրով ծրագրի շրջանակում մասնակցել եմ Շվեդիայի Թագավորության Ստոկհոլմ քաղաքում կայացած ճանաչողական-աշխատանքային այցին:

Ընդհանուր առմամբ ճանաչողական-աշխատանքային այցի նպատակն էր նպաստել հետևյալ թեմաների շուրջ տեղեկացված լինելուն, փոխըմբռնմանը և արդունավետ քննարկումների ծավալմանը.

- Գործնականում ապակենտրոնացման առանցքային սկզբունքների վերաբերյալ փոխըմբռնման բաձրացում, ուշադրության սևեռում քաղաքական, ադմինիստրատիվ և ֆիսկալ ապակենտրոնացման համակարգի վրա՝ կենտրոնանալով մասնավորապես կառավարման տարբեր օղակների միջև և դրանց ներսում լիազորությունների բաշխման վրա,
- Շվեդիայի տեղական ինքնակառավարման դերը և տեղը հանրային կառավարման և ծառայությունների մատուցման ընդհանուր համակարգում, մասնավորապես ապակենտրոնացման ենթակա ոլորտներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրթության ոլորտին,
- Ապակենտրոնացման, դրա հիմնական առավելությունների, ինչպես նաև գործնականում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների շուրջ անհրաժեշտ երկխոսության կարևորության մասին տեղեկացվածության բարձրացում: Ինչպիսի՞ն կարող են լինել ապակենտրոնացման բարեփոխման շուրջ հստակ տեսլականը և առավել հետևողական ռազմավարական ղեկավարումը,

- Բազմամակարդակ ապակենտրոնացված կառավարման համակարգում, ներառյալ կենտրոնական կառավարման մարմիններում և ճյուղային նախարարություններում, արդյունավետ ընդլայնված հորիզոնական համագործակցության մասին ավելի լավ փոխըմբռնման և հստակ տեսլականի ձևավորում,
- Վստահություն, հաշվետվողականություն և վերահսկում կառավարման համակարգի տարբեր մակարդակների միջև և դրանց ներսում,
- Ֆիսկալ ապակենտրոնացումը, ներառյալ եկամուտներից մասհանումները (բացատրելով եկամտային հարկից մասհանումների մեխանիզմը) և համահարթեցման համակարգը, ուժեղ ֆիսկալ բազա և տնօրինվող եկամուտներ ունենալու դեպքում համայնքների առավելությունները հատկապես տնտեսական զարգացման տեսանկյունից,
- Ապակենտրոնացման ենթակա ոլորտներում փաստահեն քաղաքականության մշակում և պլանավորում,
- Տեղական ինքնակառավարման համակարգում գենդերային հավասարության դերը և դրա մասին իրազեկվածությունը:

Այցի շրջանակներում մայիսի 29-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որը մինչ այդ անցել էր ներպետական ընթացակարգերը:

Մայիսի 30-ին տեղի են ունեցել հանդիպում Շվեդիայում Հայաստանի պատվավոր դեսպան Ա. Արզումանյանի հետ, այց Շվեդիայի խորհրդարան, հանդիպում Շվեդ-Հայկական բարեկամության խորհրդարանական խմբի ղեկավարի հետ, այց Նոբելյան մրցանակի թանգարան, մայիսի 31-ին՝ հանդիպում Ուպպլանդս Վասբի համայնքապետարանում և համայնքային ենթակայության դպրոցում:

Այցի ընթացքում եղել են ապակենտրոնացման թեմայով խմբային քննարկումներ:

Տեղական ինքնակառավարման
քաղաքականության վարչության պետ *Ա. Գիլոյան*

05.06.2023թ.